ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆԻ, ԳՈՀԱՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Էլինա Գեղամյան, Գոհար Մկրտչյան:

Գործուղված պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը՝ Արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Իրավաբանական բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (քաղաք Մոսկվա) 2023 թվականի մարտի 28-ից մարտի 30-ը:

Հրավիրող կողմը՝ ԱՊՀ գործադիր կոմիտե:

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ ԱՊՀ երկրների արդարադատության նախարարների խորհրդում ձևավորված աշխատանքային խմբի կողմից մշակված «Դատական ակտերի հարկադիր կատարումն իրականացնելիս տեղեկատվության փոխանակման հարցերով համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ Համաձայնագիր) մշակման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի քննարկումներին մասնակցություն, որն ուղղված է դատական ակտերի հարկադիր կատարման շրջանակում ԱՊՀ երկրների իրավասու մարմինների միջև տեղեկատվության փոխանակման հնարավորության նախատեսմանը:

Քննարկված թեմաները՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն իրականացնելիս տեղեկատվության փոխանակման հարցերով համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի ժամանակ ներկայացվել և քննարկվել են Համաձայնագրի նախագծի կետերը, մասնավորապես՝ ԱՊՀ անդամ երկրներում հարուցված կատարողական վարույթի շրջանակում ԱՊՀ անդամ այլ երկրների իրավասու մարմիններին կատարողական վարույթով պարտապանի, նրա գույքի, պարտապանի մասնակցությամբ կատարողական վարույթների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հնարավորությունը, տեղեկատվության փոխանակման կարգը, հայցվող տեղեկատվության շրջանակը և հարկադիր կատարման ենթակա այն ակտերի շրջանակը, որոնց հարկադիր կատարման ընթացքում կարող է իրականացվել Համաձայնագրով նախատեսվող տեղեկատվության փոխանակումը:

Հայաստանի ներկայացուցիչների կողմից մշակվել, հանդիպման ընթացքում ներկայացվել և համաձայնագրի նախագծում ներառվել են համաձայնագրի շրջանակում անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված կարգավորումներ, կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ՝ Համաձայնագրի շրջանակում փոխանակման ենթակա տեղեկատվության շրջանակի, Համաձայնագրի շրջանակում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության ձևերի և ուղղությունների առնչությամբ:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որոշվել է շարունակել համաձայնագրի նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքը, որի շրջանակում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները ևս հանձն են առել համաձայնագրի մշակման կոնկրետ ուղղություններով աշխատանք տանել:

Հանդիպման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն շարունակել համաձայնագրի մշակման հետագա աշխատանքները՝ հնարավորինս շուտ ավարտին հասցնելու համար:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախնական պայմանավորվածության համաձայն՝ աշխատանքային խմբի հաջորդ հանդիպումը որոշվել է անցկացնել 2023թ. հունիս-հուլիս ամիսներին:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմի թիվ 02/06.12/35136-2021 հանձնարարականի՝ վերը նշված գործուղման արդյունքների վերաբերյալ կազմակերպվել է աշխատանքային քննարկում Արդարադատության նախարարության իրավասու պաշտոնատար անձանց և ստորաբաժանումների համակարգողների մասնակցությամբ, և գործուղման ժամանակ ստացած տեղեկատվությունը փոխանցվել է վերջիններիս՝ իրենց համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների աշխատակիցներին իրազեկելու համար:

Ստորագրությունը, ամսաթիվը.

Էլինա Գեղամյան

05.04.2023թ.